

**<<Հայոց Եկեղեցու պատմություն>>**

**10-րդ դասարան**

**№ 1-8**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

- 1. Ինչպե՞ս Պիղատոսն արտահայտեց իր անհամաձայնությունը Հիսուսին մահվան դատապարտելու որոշման վերաբերյալ. (0.5 միավոր)**
  - 1) ծնկի իջավ և աղոթեց
  - 2) վիճեց քահանայապետերի հետ
  - 3) ջուր վերցրեց և լվաց ձեռքերը
  - 4) շփոթված դուրս եկավ դահլիճից
  
- 2. Գրկելով մանուկ Հիսուսին ի՞նչ ասաց Սիմեոն ծերունին. (0.5 միավոր)**
  - 1) որ նա կդառնա Երուսաղեմի արքա
  - 2) որ նա կփրկի իսրայելացիներին
  - 3) որ նա կդառնա մեծագույն մարգարե
  - 4) որ նա փրկություն և լույս կլինի մարդկանց համար
  
- 3. Հայ Առաքելական Եկեղեցու յոթ խորհուրդներից ո՞րն է համարվում Ս. Պատարագի հիմնական առանցքը. (0.5 միավոր)**
  - 1) Մկրտության խորհուրդը
  - 2) Դրոշմի խորհուրդը
  - 3) Ապաշխարության խորհուրդը
  - 4) Հաղորդության խորհուրդը
  
- 4. Ո՞ր տիեզերական ժողովը ընդունեց <<Մի աստվածություն, երեք անձինք>> բանաձևը. (0.5 միավոր)**
  - 1) Նիկեայի
  - 2) Կոստանդնուպոլսի
  - 3) Եփեսոսի
  - 4) Քաղկեդոնի

**5. Ո՞ր կաթողիկոսի հրավերով գումարվեց Շահապիվանի եկեղեցական ժողովը.**

**(0.5 միավոր)**

- 1) Բաբկեն Ա Ոթմսեցու
- 2) Գյուտ Ա Արահեզացու
- 3) Ներսես Մեծի
- 4) Հովսեփ Ա Հողոցմեցու

**6. Ե՞րբ է հիմնադրվել Երուսաղեմի հայոց պատրիարքությունը. (0.5 միավոր)**

- 1) 638թ.
- 2) 1113թ.
- 3) 1446թ.
- 4) 1461թ.

**7. Զեյթունի 1895թ. ինքնապաշտպանության ժամանակ հոգևորական ո՞ր գործչի թրի տակով են անցել գերի ընկած թուրք զինվորները. (0.5 միավոր)**

- 1) Վարդան վարդապետի
- 2) Բագրատ վարդապետ Թավաքալյանի
- 3) Ներսես եպիսկոպոս Խարախանյանի
- 4) Բարդուղիմեոս վարդապետի

**8. Եկեղեցում գործածվող ո՞ր գրքում է նշվում տարվա ընթացքում կատարվող եկեղեցական տոների օրերն ու կատարման կարգը. (0.5 միավոր)**

- 1) Պատարագամատույց
- 2) Տոնացույց
- 3) Շարակնոց
- 4) Հայսմավուրք

**№ 9-12**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

9. Բուն Բարեկենդանի հաջորդ երկուշաբթի օրվանից սկսվում է \_\_\_\_\_: (1 միավոր)
10. Նիկիայի Տիեզերական ժողովում Հայոց եկեղեցին ներկայացնում էր \_\_\_\_\_ եպիսկոպոսը: (1 միավոր)
11. Հաշվի առնելով Մեծ եղեռնի ողբերգական հետևանքները՝ Գևորգ Ե կաթողիկոսը մերձավոր հարազատների միջև ամուսնական արգելքը իջեցրեց մինչև-----աստիճանի: (1 միավոր)
12. Կյուրեղ Երուսաղեմացին գրում է. <<\_\_\_\_\_ տալն Աստծու գործն է. այն պահելն ու պահպանելը՝ քոնը>>: (1 միավոր)

**№ 13-14**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝**

**յուրաքանչյուրը 4 փաստից**

**13. Իրադարձության վայրը համապատասխանեցնել նրա հետ կապված տոնին.  
(1 միավոր)**

- |                       |                 |
|-----------------------|-----------------|
| 1. Սուրբ Ծնունդ       | ա) Երուսաղեմ    |
| 2. Համբարձում         | բ) Ձիթենյաց լեռ |
| 3. Ծաղկազարդ          | գ) Բեթղեհեմ     |
| 4. Պայծառակերպություն | դ) Սինա լեռ     |
|                       | ե) Թաբոր լեռ    |


**14. Եկեղեցու Սրբազան Ավանդության, որմնակարչության, մանրանկարչության, քանդակագործության մեջ տարածված ավետարանիչների խորհրդանշանները համապատասխանեցնել ավետարանիչներին. (1 միավոր)**

- |              |           |
|--------------|-----------|
| 1. Մարկոս    | ա) մարդ   |
| 2. Հովհաննես | բ) օձ     |
| 3. Ղուկաս    | գ) եգ     |
| 4. Մատթեոս   | դ) առյուծ |
|              | ե) արծիվ  |

1	
2	
3	
4	

**№ 15-16**

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող  
առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից**

**15. Տաղավար տոները դասավորել ըստ նրանց տոնման հաջորդականության. (1 միավոր)**

- ա) Սուրբ Հարություն
- բ) Պայծառակերպություն
- գ) Խաչվերաց
- դ) Մարիամ Աստվածածնի Վերափոխում
- ե) Սուրբ Ծնունդ

1	
2	
3	
4	
5	

**16. Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները դասավորել ըստ նրանց հիմնադրման հաջորդականության. (1 միավոր)**

- ա) Աղթամարի կաթողիկոսություն
- բ) Սսի կաթողիկոսություն
- գ) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
- դ) Աղվանից կաթողիկոսություն
- ե) Երուսաղեմի հայոց պատրիարքություն

1	
2	
3	
4	
5	

**№ 17**

**Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից**

**17. Կարդացե՛ք մեջբերված աղոթքը և պատասխանե՛ք հարցերին. (2 միավոր)**

**Պահապան ամենայնի Քրիստոս.  
աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ  
ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան,  
ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել,  
զի մի երբէք սասանեցայց,  
և ողորմեա Քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:**

1) Ով է այս աղոթքի հեղինակը: **(1 միավոր)** \_\_\_\_\_

2) Օրվա ո՞ր պահին է այն ասվում: **(1 միավոր)** \_\_\_\_\_

**Տերմինների, հասկացությունների, պարճառահեղանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 2 ճիշտ պատասխանով**

**18. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ. (0.5 X 2 = 1 միավոր)**

- 1) 1897 թ. հունիսին Ռուսաստանի Պետական խորհրդի որոշմամբ հայկական բոլոր ծխական դպրոցները դրվում էին կաթողիկոսի տնօրինության ներքո:
- 2) 1910 թ. Գևորգ Ե Սուրենյանցը դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով հարց բարձրացնել ցարի առջև՝ 61-րդ հոդվածն իրականացնելու համար:
- 3) 1824 թ. Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում հիմնում է հայկական դպրոց, որը հետագայում կոչվում է Ներսիսյան:
- 4) 1828թ. հունվարին ցարական կառավարության կողմից Ներսես Աշտարակեցուն շնորհվում է Ալեքսանդր Նևսկու շքանշան:
- 5) 1889թ. էջմիածնում ստեղծվում է «Համազգյաց» ընկերությունը, որի նպատակն էր միավորել Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին:


**19. Նշել երկու ճիշտ պատասխան. (0.5 X 2 = 1 միավոր)**

**Եզնիկ Կողբացին «Եղծ աղանդոց» աշխատության մեջ.**

- 1) Դատապարտում էր Թոնդրակյան շարժումը:
- 2) Քննադատում էր մահմեդականության հիմնական դրույթները:
- 3) Դատապարտում էր աստղագուշակությունը, սնտոխապաշտությունը և ճակատագրապաշտությունը:
- 4) Քննադատում էր բարի և չար աստծու գոյության մասին զրաշղատական ուսմունքը:
- 5) Քննադատում էր քրիստոնեության հիմնական դրույթները:


**№ 20**

**Խնդիր-առաջադրանք (2 միավոր)**

20. 1915թ. ապրիլի 15-ին Թալեաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ տեղական իշխանություններին հղվեց ջարդերի վերաբերյալ գաղտնի հրամանագիր: Հայտնի է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի 1915 թ. Դեկտեմբերի 1-ի հեռագիրը այն մասին, որ «հայ հոգևորականությունը պետք է ոչնչացվի առաջին հերթին»:

**Հարց.**

**Ինչո՞ւ էր Երիտթուրքերի կառավարությունը հատուկ ուշադրություն դարձնում հայ հոգևորականության բնաջնջմանը: Ի՞նչ վնաս հասցվեց Հայոց եկեղեցուն Մեծ եղեռնի տարիներին:**

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---





A series of 25 horizontal dashed lines spanning the width of the page, providing a template for handwriting practice.





A series of 28 horizontal dashed lines spanning the width of the page, providing a template for handwriting practice.